

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Ռաֆիկ Գազիկի Մաշուրյանի «Կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման մոդելավորման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ժամանակակից տնտեսական կյանքը բնութագրվում է բազմաթիվ գործոնների և գործակալների միջև բարդ փոխհարաբերություններով: Տնտեսական և քաղաքական գործընթացների արագության և անընդհատ աճող անորոշությունների պայմաններում խիստ կարևորություն են ստանում կառավարման արդյունավետության բարձրացմանը միտված նախաձեռնությունները: Սա հատկապես կենսական նշանակություն ունի կազմակերպությունների խմբերի համար, որոնք իրենց հերթին արդեն հանդիսանում են բարդ փոխհարաբերությունների կրող:

Վերը ներկայացվածը հաշվի առնելով, ավելի ակնհայտ է դառնում, որ կազմակերպությունների խմբերի կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից պետք է մշտապես միասին դիտարկել ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական գործոնները: Հետևաբար, անհրաժեշտ է կիրառել այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս հաշվի առնել նման գործոնների սիներգիան: Այս առումով շահեկանորեն առանձնանում է Ցուցանիշների հաշվեկշռված համակարգը (Balanced Scorecard), որը թույլ է տալիս պատճառահետևանքային կապերի շղթաների միջոցով ինտեգրել ֆինանսական և ոչ ֆինանսական գործոնների ազդեցությունը ռազմավարական կառավարման գործընթացի մեջ:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ ներկա տնտեսական պայմաններում առավել բարձր արդյունավետություն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է ցուցաբերել բավարար ճկունություն ՑՀՀ-ի ներդրման տեսանկյունից՝ դիտարկելով նաև նրա համադրելիությունը տնտեսամաթեմատիկական ժամանակակից մոդելների հետ՝ հաշվի առնելով կազմակերպությունների խմբերի առանձնահատկությունները:

Հենց այդ խնդիրների մի մասի պարզաբանումներն էլ հանդիսացել են սույն ատենախոսության հենքը՝ պայմանավորելով դրա **արդիականությունն ու հրապարակությունը**:

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները

Հետազոտությունը որպես հիմնական նպատակ հետապնդում է կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման արդյունավետության բարձրացման համար մոդելավորման համակարգի մշակումը՝ հիմնված ՑՀՀ-ի մեթոդաբանության վրա: Ներկայացված նպատակի իրագործման համար ատենախոսությունում դրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել ՑՀՀ-ի արդի տեսական և կիրառական մոտեցումները կազմակերպությունների խմբի կառավարման համատեքստում,
- հարմարեցնել ՑՀՀ-ի կառուցվածքը կազմակերպությունների խմբի բազմամակարդակ առանձնահատկություններին,
- վերլուծել և մոդելավորել ֆինանսական ցուցանիշների փոխազդեցությունները Դյուպոնի մոդելի և ժամանակային շարքերի վերլուծության կիրառմամբ,
- բացահայտել ֆինանսական ցուցանիշների տատանման բնույթն ու ցիկլային օրինաչափությունները,
- ուսումնասիրել արտարժույթային փոխարկումների մոդելավորման և մեքենայական ուսուցման գործիքների կիրառության խնդիրները,
- գնահատել քաղաքական ռիսկերն ու դրանց հետևանքները,
- վերլուծել թվայնացման ազդեցությունն աշխատակիցների բավարարվածության, լոյալության, մոտիվացիայի և մասնագիտական հյուծման վրա,
- ձևավորել կազմակերպությունների խմբի ՑՀՀ-ի ինտեգրված մոդել:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հիմնավորված են հետազոտության արդիականությունը և ստացված արդյունքների գործնական ներդրման հրատապությունը, դրված է հետազոտության հստակ նպատակը, բացահայտված են այն իրագործելու ուղիները:

Ատենախոսության առաջին՝ **«ՑՀՀ-ի տեսամեթոդական հիմքերը կազմակերպությունների խմբի կառավարման համապեքստում»** գլխում մանրամասն անդրադարձ է կատարվել կազմակերպությունների խմբերի ռազմավարական կառավարման առանձնահատկություններին: Համակարգված կերպով ներկայացված են Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի էությունը և հիմնական կառուցվածքային առանձնահատկությունները: Հեղինակն անդրադարձել է նաև ՀՀ կազմակերպությունների խմբերի կառավարման հիմնախնդիրներին և յուրահատկություններին:

Աշխատանքի երկրորդ՝ **«Կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորումը ՑՀՀ-ի հիման վրա»** գլխում ամփոփ նկարագրված են հետազոտության մեջ կիրառություն գտած տնտեսամաթեմատիկական մոդելների հիմնական տեսական դրույթները: Առաջ է քաշվել կազմակերպությունների խմբերի առանձնահատկություններին ՑՀՀ-ի ավանդական կառուցվածքի հարմարեցման մոտեցումը:

Ատենախոսության երրորդ՝ **«Z Կազմակերպությունների խմբի ՑՀՀ-ն»** գլխում իրականացվել է նախորդ գլխում ներկայացված մոդելների գործնական կիրառությունը Z ընկերությունների խմբի փաստացի տվյալների վրա: Ստացված արդյունքները կազմում են ՑՀՀ ինտեգրված կառավարման շրջանակի կիրառական հիմքը:

Եզրակացություններ և առաջարկություններ բաժնում էլ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսի կողմից ներկայացված ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նոոոսթոն կառուցված են հետևյալով:

1. Առաջարկվել է կազմակերպությունների խմբի բազմամակարդակ ՑՀՀ-ի կառուցվածք, որը կապում է ռազմավարական կառավարման տրամաբանությունն ու տնտեսագիտամաթեմատիկական գնահատման գործիքակազմը:
2. Մշակվել է կազմակերպությունների խմբի ֆինանսական ու գործառնական դինամիկ և պարբերական ցուցանիշների ինտեգրված տնտեսագիտամաթեմատիկական մոդել:
3. Բնական լեզվի մշակման և NER մեթոդների հիման վրա մշակվել է կազմակերպությունների խմբում նյութական արժեքների և արտադրանքների անվանումների նույնականացման և համադրելիության ապահովման մոտեցում:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել կազմակերպությունների խմբերի ռազմավարական կառավարման, ֆինանսական ու գործառնական ցուցանիշների մոնիթորինգի, ռիսկերի գնահատման որոշումների կայացման գործընթացներում:

Դիփոդություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից կարևորվել են հետևյալները.

1. Ատենախոսության առաջին գլխում հեղինակի կողմից մանրամասն անդրադարձ է կատարվել ՑՀՀ-ի հիմնարար սկզբունքներին և առանձնահատկություններին: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից ավելի լայն անդրադարձ կատարվեր նաև ռազմավարական կառավարման այլ մոտեցումներին և մեթոդներին:

2. Ատենախոսության վերջում հեղինակը ներկայացրել է առաջարկվող համակարգի վերջնական կառուցվածքը: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակն այդ համատեքստում փորձ աներ նաև հստակեցնել բաղադրիչների և առաջարկվող գործողությունների միջև պատճառահետևանքային կապերի շղթաները՝ ՑՀՀ-ի էությանը համապատասխան:

3. Հետազոտության երրորդ գլխում իրականացված քանակական վերլուծությունների որակը կշահեր, եթե հեղինակի կողմից դիտարկվեր տվյալների ավելի մեծ հենք: Մասնավորապես դա վերաբերում է ֆինանսական վերլուծությանը (36 ամսվա տվյալներ) և թվայնացման ազդեցության ուսումնասիրությանը (214 հարցաթերթիկ), ինչը թույլ կտար արդյունքների մեկնաբանությունը դարձնել ավելի ընդհանրական:

4. Նույն գլխում ներկայացված քաղաքական ռիսկի գնահատման մոդելի արդյունքների ընդհանրացման հնարավորությունների տեսանկյունից աշխատանքը կշահեր, եթե հեղինակը դիտարկեր մեկից ավել ժամանակաշրջաններ կամ երկուսից ավել իրավիճակներ:

Եզրակացություն

Թվարկված դիտողությունները որևէ կերպ չեն ազդում հետազոտության արդյունքների վրա: Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի ատենախոսությունն ունի գիտագործնական նշանակություն և իրենից ներկայացնում է ինքնուրույն հետազոտություն, որում դրված ու լուծված են կազմակերպությունների խմբերի կառավարման կարևոր գիտատեսական ու կիրառական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել կազմակերպությունների խմբերի կառավարման արդյունավետության բարձրացմանը միտված նախաձեռնություններում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 6 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի «Կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման մոդելավորման հիմնախնդիրները» թեմայով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ
տնտեսագիտության թեկնածու՝

Հ.Յ. ԱԴԻԼԽԱՆՅԱՆ

Հ. Յ. Ադիլխանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

**ԵՊՀ գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու՝**

Մ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

31.07.2026

